31.08.2021թ.

# Հ.Հ ՎԱՆԱՁՈՐԻ Ա. ԽԼՂԱԹՅԱՆԻ №18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

# ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

# 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՄԱՐԱԲՅԱՆ

Գիտելիքն աղբյուր է գիտության

ԵՎ բանալին դպրության

Մութը լույսով ողողող,

Չարին բարությամբ հաղթող:

Գիրք կարդալը ծով մտնելու նման է, պիտի գլուխդ պտտվի ծովի անսահմանությունից,

պիտի հանկարծ քո մեջ շոշաթես հավերժության ներկայությունը,

պիտի հանձնվես նրանց տարերքին:

## Գրադարանի ակտիվներ

1. Մարգարյան Սոֆիա
2. Կոստանյան Անահիտ
3. Վարդերեսյան Լիլիթ
4. Շահվերդյան Մալվինա
5. Շահավերդյան Մարիաննա
6. Ենոքյան Մեյրան

## Գրադարանի խնդիրները

1. Գրադարանի կարևորագույն խնդիրը մնում է երեխաների ընթերցանության կուլտուրան բացահայտելը:

2.Լուրջ ուշադրություն դարձնել դասագրքերի պահպանմանը:

3.Հարստացնել գրադարանի գրքային ֆոնդը:

4.Ուշադրության կենտրոնում պահել հիշարժան տարեվերջը:

5. Կազմակերպել միջոցառումներ: Այդ միջոցառումները նպաստում են աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը, ձևավորում հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ:

# I Կիսամյակ

1. Դպրոցական դասագրքերի բաշխումը ըստ դասարանների

1 – 4 –րդ դասարան /առանց ներդրման

5 – 9 –րդ դասարան

10 – 12 –րդ դասարան

2. Լրացնել դասագրքերի ֆոնդի հաշվառման մատյանը

3. Բոլոր ուսուցիչներին ապահովել դասագրքերով և մեթոդական նյութերով

4. Կազմել՝ ա) Հաշվետվություն դասագրքերի ֆոնդի վերաբերյալ

բ) Սոց. անապահով աշակերտների բացահայտում և հաշվառում:

գ)Սոց. անապահով և ԿԱՊԿՈՒ սովորողներին դասագրքերով օգնության կազմակերպում:

| Ժամկետը | Ովքեր են մասնակցում | Պատասխանատու անձ |
|---|---|---|
| 01.09.21<br><br>05.09.21<br><br>12.09.21 | Գրադարանավար<br>Դասվար<br>Դասղեկ<br>Սոց մանկավարժ | Գրադարանավար<br>Ալինա Մարաբյան |

Ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ սովորողներին: Ներառական կրթության հիմքում բոլոր երեխաների հետ կրթություն ստանալու իրավունքն է:Այս պետք է համարվի ցանկացած երեխայի մտավոր, ֆիզիկական և հոգևոր զարգացման նպաստող միջոց:

Ուսումնական տարն սկսեցինք « Գիտելիքի օրվան » նվիրված միջոցառմամբ:

Սեպտեմբեր ամսին տեղի է ունեցել ՀՀ Անկախությանը նվիրված միջոցառում:

«Ձեզ բացակա չենք դնի»
«Մենք խաղաղություն ենք ուզում» թեմաներով գրադարանում կազմակերպել զրույցներ, որտեղ ևս մեկ անգամ շեշտել, որ հերոսները չեն մեռնում:Հայ ժողովրտի համար կրկնվեց սարսափելի պատմությունը...
Ժամանակն է, որ բոլորս հասկանանք, չպետք է հուսահատվել՝ հանուն մեր անմահ հերոսների:
Ձեր շնորհիվ մենք այսօր կանք, ապրում ենք և պարտավոր ենք ապրել:

Հոկտեմբերի 3-ին գրադարանում կազմակերպվել է « Գրադարանային երեկո » հանդիսությունը, որի նպատակն է կարևորել ընթերցանության դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում: Միջոցառումը կրում է « Դարձիր գրադարանի բարեկամը» խորագիրը:

Կազմակերպել ցերեկույթ նվիրված « Վանաձորի օրվան » ներկաներին շնորհավորել տոնի առթիվ:
Միջոցառումը նպաստում է հայրենի քաղաքի հանդեպ սիրո, նվիրվածության, և հայրենասիրական դաստիարակության զարգացմանը:

Հոկտեմբերի 5-ը «Ուսուցչի օրն » է: Շնորհավորել բոլոր ուսուցիչներին՝ մաղթելով պայծառ, խաղաղ, ու լուսավոր օրեր, մշտապես ծաղկուն ու հաջողության բարձունքներին:

| Ժամկետը | Ովքեր են մասնակցել |
|---|---|
| 01.10.21<br><br>06.10.21 | Ուսուցիչներ<br>Աշակերտներ<br>Գրադարանավար |

Ուսուցչի օրվան նվիրված միջոցառումը նպաստում է աշակերտների գեղագիտական ճաշակի, ինքնահաստատման բարձացմանը:

1. Կազմակերպել գրքերի ցուցադրություններ:

2. Շարունակել ձևավորել և կանոնավորել գեղարվեստական գրականությունը:

3. Բարձրաձայն ընթերցանություն կազմակերպել «Ճանապարհորդություն դասագրքերի աշխարհում»:

4. Գրադարանում անցկացնել դաս «Հեքիաթների աշխարհում» թեմայով

| Ժամկետը | Ովքեր են մասնակցում |
|---|---|
| 09. 11. 21 | Դասվարներ<br>Աշակերտներ<br>Գրադարանավար |

Ընթերցել և աշակերտներին ցուցադրել Հովհաննես Թումանյանի գրքերից:

1. Աշակերտներին ծանոթացնել գրադարանից օգտվելու կանոններին:Նրանք պետք է դառնան գրադարանի լավ բարեկամն ու ակտիվ ընթերցողը:

2. «Աշխարհի իմաստուն հեքիաթներ» ժողովածուից բեմականացնել տարբեր ժողովուրդների հեքիաթներ:

3. Մայրենի առարկայից կազմակերպել բաց դաս «Ժողովուրդն իմաստուն է» խորագրով:

4. Աշակերտների հետ ամփոփել «Առակս ինչ կցուցանե» թեման, ներկայացնել հայ ու օտարազգի նշանավոր առակագիրներին, խոսել առակի իրական նշանակության ու խորհուրդների , դաստիարակչության նշանակության մասին:

| Ժամկետը | Ովքեր են մասնակցում |
|---|---|
| 20.11.21 | Ուսուցիչներ<br>Աշակերտներ<br>Գրադարանավար |

1. Զրուցել ավագ դասարանի աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Մասնագիտություն ընտրելիս սիրել այն, դառնալ լավագույնը, նպաստել հայրենիքի շենացմանը, զարգացմանը և հզորացմանը:

2. Ամեն ամիս շրջել դասարաններում, ստուգել դասագրքերի վիճակը:

3. Աշակերտների օգնությամբ կազմակերպել հնամաշ գրքերի վերականգնման աշխատանքներ:

4. Հավաքագրել վարձով տրվող դասագրքերի գումարը մուտքագրել շրջանառու ֆոնդի հաշվեհամարին:

| Ժամկետը | Պատասխանատու անձ |
|---|---|
| 30.11.21 | Գրադարանավար<br>Ալինա Մարաբյան |

1. Գրադարանում առանձնացված է հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունները:

2. Ուսումնական տարվա ընթացքում անցկացնում ենք «Լավագույն ընթերցող» և «Լավագույն ասմունքող» մրցույթները:
Լավագույներին պարգևատրում ենք պատվոգրերով և գրքերով:

| Ժամկետը | Ովքեր են մասնակցում |
|---|---|
| 15. 01. 22 | 1. Աշակերտներ<br>2. Գրադարանավար<br>3. Մեթոդմիավորման նախագահ<br>4. Ուսումնական գծով փոխտնօրեն<br>Լուսինե Խլղաթյան |

1. Փետրվարի 19-ին՝ Մեծ Լոռեցու ծննդյան օրը՝ գիրք նվիրելու օրը կազմակերպում ենք միջոցառում: **Այսօրվա հերոսը գիրքն է:**

2. Գրադարանում գիրք նվիրելու օրվա կապակցությամբ ստեղծում ենք անկյուն հայ և օտարազգի գրողների գրքերից:

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին

Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,

Հայոց հանդերում ի՞նչ բերք էր հասել,-

Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի

Արգանդը եղավ սրբորեն բեղուն,

Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...

1. Շարունակել ձևավորել և կանոնավորել գրականությունը:

2. Գրադարանում կազմակերպել գրքահավաք: Դպրոցի աշակերտները սիրով համաձայնվել են մասնակցել այդ գործին և գրքեր նվիրել դպրոցի գրադարանին:

3. Դասագրքերի շրջանառու ֆոնդի կողմից ստացված 1– ին դասարանների մայրենի լեզվի դասագրքերի բաշխումն ըստ դասարանների:

4. Կազմակերպել կանանց միամսյակին նվիրված միջոցառումներ:

5. Կազմակերպել միջոցառում նվիրված Մեծ Եղեռնին:

6.2021 – 2022 ուստարվա վարձակալությամբ տրվող դասագրքերի հետ ընդունում և հաշվառում: